ԱՍՈՐԻՆԵՐԻ ՋԱՐԴԵՐՆ ԻՐԱՆԻ ԹՅՈՒՐՔԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ

Հայերն ու ասորիներն իրենց բազմադարյան պատմության ընթացքում անցել են գոյատևման մաքառումների դաժան ուղի և ապրել բազմաթիվ օրհասական պահեր: Սակայն այն ծանր փորձությունները, որոնց այս երկու քրիստոնյա ժողովուրդները ենթարկվեցին Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, չունեին իրենց նախադեպը մարդկության պատմության մեջ: 1914-1918թթ. մեծ տերությունների կողմից սանձազերծված համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական ավանդական ջարդարարական քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին՝ քրիստոնյաների կոտորածներն իրագործվեցին ոչ միայն օսմանյան Թուրքիայի տարածքում, այլև նրան հարակից թյուրքաբնակ վայրերում: Այսպես, Առաջին աշխարհամարտի ժամանակ ասորիների ջարդեր իրականացվեցին նաև 1914թ. նոյեմբերի 2-ին իրեն չեզոք երկիր հայտարարած Իրանի տարածքում: Բանն այն էր, որ գերմանական և թուրքական հրամանատարությունների մշակած ծրագրում ռազմական գործողություններ էին նախատեսվել նաև Իրանում, որի տարածքը Գերմանիան և Թուրքիան ուզում էին օգտագործել որպես միջանցք՝ դեպի Բաքվի նավթային շրջաններն ու այնուհետև՝ Միջին Ասիան գրավելու համար: Ուստի Հյուսիսային Իրանը ևս վերածվեց հակամարտող երկու ճամբարների ռազմական գործողությունների թատերաբեմի:

Թուրքիան նույնիսկ չէր էլ մտել պատերազմի մեջ, երբ թուրքական հրամանատարությունն իր զորքերը տեղակայեց Վանի, Սարայի, Բաշկալեի և Շամդինանի տարածքներում: Ի պատասխան դրան, ռուսական հրամանատարությունը 1914թ. նոյեմբերի 20-ին գեներալ Ֆ. Չերնոզուբովի գլխավորությամբ զորքեր մտցրեց Իրան: Ռազմական հաջող գործողությունների արդյունքում ռուսական բանակը շուտով գրավեց Խոյը, Ուրմիան և Թավրիզը: Իրանական կառավարությունը Մոսթոուֆի-օլ-մամալեքի գլխավորությամբ, որն իշխանության գլուխ էր եկել 1914թ. օգոստոսին, իր դժգոհությունը հայտնեց ռուսական զորքերի Իրան մտնելու կապակցությամբ:

Դեռ նախքան ռուսական զորքերի Իրանի տարածք մտնելը, 1914թ. նոյեմբերի 14-ին, Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեղենսկին հեռագրեց, որ թուրքերը նպա-

տակ ունեն գրավել Ուրմիայի շրջանը՝ այստեղից երկու ուղղություններով՝ Խոյ-Ջուլֆա և Սուլդուզ-Սաուջբուլաղ, հետագայում Թավրիզի շրջան դուրս գալու համար: Այս պայմաններում ռուսական հրամանատարությունը դիմեց այնպիսի մի հակաթուրքական ուժի աջակցությանը, որպիսին Ուրմիայում և նրա շրջակայքում ապրող 70 հազար ասորիներն էին:[1]

Կովկասի փոխարքայի օգնական Օռլովն իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ «Ուրմիայի և Սալմաստի ասորիների դրությունն անելանելի է, և, ընդհանրապես, ներկա պատերազմում ասորիները հույսով են նայում Ռուսաստանին՝ նրանից սպասելով օգնություն»:[2] Հատկանշական է, որ դեռ 1897թ. Իրանում հիմնվել էր ռուսական ուղղափառ առաքելություն, որն իր քարոզչական աշխատանքներն էր տանում ասորիների շրջանում: Ի տարբերություն այլ դավանանքների քարոզիչների, ռուս ուղղափառներն այս տարածաշրջանում հասան զգալի հաջողությունների: Արդյունքում՝ 1911թ. Սալմաստի, 1912թ.՝ Թերգևարի, 1913թ.՝ Սուլդուզի, 1914թ.՝ Մերգևարի և Բարոդոստի նեստորական ասորիների մեծ մասն ընդունեց ուղղափառություն. Իրանի ասորիները կարծում էին, թե ազգովի ուղղափառություն ընդունելուց հետո ռուսները նրանց միայնակ չեն թողնի ընդհանուր թշնամու դեմ պայքարում:

Մյուս կողմից, ինչպես նշեցինք, ռուսական հրամանատարությունն իր հերթին ակնկալում էր ասորիների գործուն աջակցությունը: Եվ արդեն 1906թ. օգոստոսին Ուրմիայում ռուսական հրամանատարությունը դիմում է ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունին՝ պատերազմի դեպքում օգնության խնդրանքով, ի պատասխան որի վերջինս Վանում ռուսական հյուպատոս Ռ. Տերմենին խոստանում է 40 հազար զորք:[3]

Ասորի ժողովրդի դեպի Ռուսաստանն ունեցած կողմնորոշումը չէր կարող չանհանգստացնել Անգլիայի կառավարող շրջանակներին: Պատերազմի նախօրյակին Մար-Շիմունի մոտ՝ Ջուլամերկ են ուղևորվում անգլիական գաղտնի ծառայության երկու աշխատակիցներ՝ գնդապետ Լոուրենսը և մայոր Իզդին: Նրանք ասորիներին խոստանում են զենք, գումար, ազատագրություն թուրքերից և անգամ՝ ինքնավարություն պատերազմի ավարտից հետո: Եվ այդ ամենի փոխարեն նրանք պահանջում էին միայն ասորիների հավատարմությունը: Հոգևոր առաջնորդը մերժեց այդ խնդրանքը, լավ հասկանալով, որ անգլիացիների հավակնությունները բացառապես պայմանավորված են պատերազմական իրավիճակով: Մար-Շիմունի մերժումից հետո, տեսնելով, որ իրենց «առաքելությունը» հաջողություն չի ունենում, որոշ ժամանակ անց, Բաշկալեի կազայի Աղբակի ասորական գյուղերում նույն մայոր Իզդին անձամբ գլխավորեց քրդական ջոկատներն ու կազմակերպեց ասորիների սպանդ:

1914թ. հուլիսի 23-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Դ. Սազոնովը ռազմական նախարար Սուխոմլինովին գրում էր. «Կասկած չկա, որ Թուրքիայի հետ պատերազմում մեզ էական օգնություն կարող են ցույց տալ տեղի ասորիները»:[4]

Այդ նույն ժամանակ ռուսական հրամանատարությունը գնդապետներ Դոկուչաևի և Անդրիևսկու գլխավորությամբ դիմում է Ուրմիայի Ասորական Ազգային Խորհրդի նախագահ դոկտոր Իշայ Բեթ-Յոնանին՝ օգնության խնդրանքով: Արդյունքում՝ սկսում են կազմավորվել ասորական կամավորական ջոկատներ: Ռուսները գիտեին, որ ասորիները, քաջատեղյակ լինելով տեղանքին, կարող են իրենց օգտակար լինել: Ասորիների

շնորհիվ ռուսական հետախուզությունը օգտակար տեղեկություններ էր հավաքում թուրքերի ծավալած գործողությունների մասին, և ռուսական բանակը հնարավորություն էր ստանում դիմակայել թուրքերի և քրդերի հարձակումներին:

Արդեն 1914թ. սեպտեմբերին Ուրմիայում կազմավորվեցին ասորական զինջոկատներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր 11-ի:[5] Դրանցից (մինչև Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը) նախատեսված էին ասորական գյուղերի պաշտպանության համար: Պահեստային զորքի կազմում կար ևս երկու ջոկատ: Կովկասյան ճակատի բացվելուն պես՝ ասորական ջոկատները պետք է դուրս գային իրենց գյուղերից և գործեին ռուսական բանակի հետ մեկտեղ: Այդ նպատակով ասորական պահեստային ջոկատներից կազմավորվում է ուժեղացված մի վաշտ, որը տեղակայված էր Ուրմիա լճի ափին գտնվող Չարբաշ բնակավայրում: Պետք է նշել, որ ռուսական հրամանատարությունը, հաշվի առնելով ասորական ջոկատների ռազմական կարողությունները, նրանց էր հանձնարարում իր գրաված տարածքների անվտանգության պահպանումը:

Ինչպես արդեն նշեցինք, իրանական իշխանությունները թշնամական դիրք էին բռնել ռուսական զորքերի նկատմամբ՝ իրենց տարածք մտնելու կապակցությամբ, այդ քայլը գնահատելով որպես չեզոքության խախտում: Նրանք չէին թաքցնում նաև իրենց դժգոհությունը ասորական ջոկատների կազմավորման փաստի առիթով, ուստի չէին արգելում, որպեսզի Մոսուլից իրենց երկիր մտնեն թուրք-քրդական ջոկատներ՝ ռուսական բանակի դեմ հարձակողական գործողություններ ծավալելու համար:

Անշուշտ, թուրքական բռնատիրության դեմ ազգային-ազատագրական պայքարում ասորիների մոտեցումները լիովին համահունչ էին հայ ժողովրդի ձգտումներին: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևմտյան Իրանի տարածքում սկսվեցին զանգվածային բռնություններ: Այստեղ հատկապես տուժեցին Ուրմիայի տարածաշրջանի ասորիները, որոնց գյուղերն ամբողջովին հրդեհվեցին և թալանվեցին քրդերի կողմից:[6] Միայն 1914թ. սեպտեմբերին հրդեհվեց ավելի քան 30 հայկական և ասորական գյուղ: «Հրդեհներն ուղեկցվում են դաժանությամբ», - գրում էր «Քաքու» թերթը: Միայն Քանաչար ասորական գյուղում ողջակիզվեց 200 մարդ:[7]

1914թ. հոկտեմբերի 3-ին Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեդենսկին տեղի նահանգապետի հետ այցելում է քրդերի, թուրքերի և պարսկական խուժանի կողմից ավերված ասորական Անգար, Ալվաչ և այլ գյուղեր: «Ամենուրեք, - գրում էր նա, - առկա են ջիհադի արդյունքները: Անգար գյուղում ես տեսա ասորիների հրկիզված դիակներ, որոնց փորերը խոցված էին մեծ, սրածայր ցցերով: Ասորիների շինությունները հրդեհված և ավերված են: Հարևան գյուղերի հրդեհը դեռ շարունակվում է: Ասորիների ընտանիքները հավաքվել էին քաղաքի մոտակա դաշտերում»:[8] 1914թ. հոկտեմբերի 24-ի Վեդենսկին հեռագրում էր հետևյալը. «Փախստականների հոսքը շարունակվում է: Լուրեր են շրջում սպասվող նոր սպանդի մասին»: Մեկ օր հետո նա նշում էր, որ Թուրքիայից Իրան են անցել ավելի քան 600 փախստական ասորի:[9]

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում և Սարիղամիշի գծին զուգահեռ (1914թ. դեկտեմբեր - 1915թ. հունվար), թուրքական զորքերն ակտիվացրին իրենց ռազմական գործողությունները Ուրմիայի շրջանում գործող ռուսական ուժերի դեմ: Թուրքական հարձակումներից ան-

հանգստացած՝ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը կարծում էր, թե Ուրմիայի ռուսական ջոկատը, որն առանձնացված էր հիմնական զորքից, կարող է հեշտությամբ ոչնչացվել թուրքերի մեծաքանակ ուժերի կողմից: Այդ իսկ պատճառով, 1914թ. դեկտեմբերի 20-ին նա հրամայում է գեներալ Ֆ. Չերնոզուբովին՝ Ուրմիա քաղաքից հանել իր զորքերը և շարժվել Խոյի ուղղությամբ: Այդ ժամանակ ավելի քան 40 հազար հայ և 8061 (1325 տուն) ասորի այստեղից գաղթում են ռուսական զորքերի հետ:[10] Ասորիների թվաքանակի մասին հաղորդած այս տվյալը փոքր ինչ վիճելի է: Օրինակ, ըստ Նյու-Յորքի համալսարանի արևելյան լեզուների պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ազգությամբ ասորի Ա. Յոհաննանի՝ «1915թ. հունվարի 2-ին և 3-ին ռուսական զորքերի հետ միասին Ռուսաստանի տարածք գաղթեցին 25 հազար ասորի»:[11] Իսկ «Մշակ» թերթի թղթակից Ս. Մելիքյանը, այս օրերին այցելելով հյուսիսային Իրան, իր հերթին գրում էր. «Մինչև մեր Թավրիզ հասնելը, այստեղ արդեն իրարանցում էր սկսվել: Մենք տեսանք 40 հազարանոց ասորի գաղթականների մի հոսք, որոնք փախչում էին թուրքերից: Դիլման չհասած՝ մեր առջև մեկը մյուսի հետևից բացվում էին անվերջանալի աղետների տեսարաններ, որոնք վերապրում էին ասորի գաղթականները»:[12]

1916թ. փետրվարի 8-ին ամերիկյան «Նյու-Յորք թայմս» պարբերականը, ներկայացնելով ասորիների դժնդակ դրությունը, գրում էր. «Հունվարի 12-ին Պետրոգրադ գաղթած ազգությամբ ասորի բժիշկ Յակոբ Սարգիզը պատմում էր, որ անցյալ տարվա ընթացքում ռուսական զորքերի հետ մեկտեղ Ուրմիայից հեռացան 14 հազար և շրջակա գյուղերից՝ հազար ասորի: Նախքան այդ, Ուրմիայի շրջանից արդեն գաղթել էին 45 հազար ասորի: Նրանցից շատերը մահացան ճանապարհին»:[13]

Գաղթականները քայլում էին առավոտից երեկո՝ անտանելի ցրտի պայմաններում: Նրանց կեսը ճանապարհին մահանում էր քաղցից և հիվանդություններից: Մեծ մասը զոհ էր գնում համաճարակներին. հատկապես շատ էին երեխաների կորուստները: Այդ գաղթերի կապակցությամբ անգլիացի մի ականատես գրել է. «Իմ առաջ բացվեց մերժված մի ժողովրդի ողբերգական գաղթի ճակատագրի պատկերը. ես խոսում եմ ասորիների մասին»:[14]

Ռուսական բանակի հեռանալուց հետո 1914թ. դեկտեմբերի վերջին թուրքական հրոսակների մի խումբ անցավ Իրանի սահմանը և մտավ Ուրմիայի հարավում գտնվող Սաուջբուլաղ բնակատեղին, որն էլ խուճապ առաջացրեց տեղի քրիստոնյա բնակչության շրջանում: 98 ասորական գյուղեր հրդեհվեցին և ավերակների վերածվեցին, իսկ բնակիչները՝ կոտորվեցին:[15] 500 մարդ սպանվեց, 800 կին և աղջիկ թուրքերի կողմից տարվեցին անհայտ ուղղությամբ: 750 մարդ գլխատվեց ասորական Հաֆթվան գյուղում, որից հետո 5 հազար ասորուհիներ հայտնվեցին քրդական հարեմներում:[16] Ասորական ուղղափառ եկեղեցու եպիսկոպոս Մար-Իլիան հոգևորականների հետ աքսորվեց: Հետագայում հրաշքով փրկված և Մոսկվա մեկնած այդ անձնավորությունը վկայում էր. «Ես ականատես եղա ասորական Տակարդվիլ գյուղի բնակչության կործանմանը: Այդ գյուղը գտնվում էր Ուրմիա լճի ափին, և ցամաքից թշնամու հարձակումից հետո իմ ազգի 300-400 կանայք գերադասեցին ջուրը նետվել և խեղդվել»:[17]

1915թ. ապրիլի 29-ին «Նյու-Յորք թայմս»-ը տպագրել էր Թավրիզի միսիոներական հիվանդանոցի տնօրեն Վ. Վաննեմանի՝ իր կնոջն

ուղղված նամակը, որտեղ նա գրում էր. «Այս դեպքերը տեղի են ունեցել ռուսական զորքերի Սալմաստ հասնելուց 1-2 օր առաջ: Տաս օր առաջ քրդերը թուրքերի հետ միասին Սալմաստում հավաքեցին հայ և ասորի տղամարդկանց, որոնցից 400-ին ուղարկեցին Խոսրովա, իսկ մյուս 400-ին՝ Հաֆթվան: Նրանցից և ոչ մեկը ողջ չմնաց»:[18]

1915թ. հունվարին ոստիկանական մի ջոկատ Քաչալի խանի գլխավորությամբ շրջապատեց Ուրմիայի ամենամեծ ու ամենահարուստ ասորական Գուլփաշան գյուղը և քարուրանդ արեց այն:[19] Այստեղ ապրում էր 300 տուն բնակչություն, որոնցից 2500-ը՝ ասորիներ: Բացի մի քանի հարյուրի հասնող ասորիներից, մյուսները սպանվեցին:[20] Գուլփաշան և Չահար-Գիվջան գյուղերի ասորի մեծահարուստներ Եուսուֆը և Աբդիշոն 5 հազար թուման էին վճարել Գառնի աղային՝ իրենց գյուղերը թուրքերի ոտնձգություններից զերծ պահելու համար: Սակայն դա չփրկեց ասորի բնակչությանը:[21] Ուրմիայում ամերիկյան փոխհյուպատոս, ինչպես նաև բողոքական միսիոներների ղեկավար Վ. Շեդդը մարտի 1-ի նամակում պատմում էր. «Գուլփաշանը վերածվել է ավերակների: Գյուղի աչքի ընկնող ասորի տղամարդկանց գլխները գնդակահարեցին գերեզմանոցում: Կանայք և աղջիկները բռնաբարվեցին թուրքերի կողմից: Ավելի քան 800 մարդ սպանվեց»: Դոկտոր Շեդդը մի խնդրագիր է ուղարկում ամերիկյան հյուպատոս պրն. Փադդոքին, որպեսզի վերջինս այցելի Ուրմիայի շրջան և անձամբ տեսնի այդ եղեռնագործությունը:[22]

Ֆրանսիական քարոզիչ դոկտոր Ռ. Լաբարեն 1915թ. մարտի 12–ին իր մորը գրած նամակում պատմում էր. «80 ասորի տղամարդ ապաստանել էին ֆրանսիական քարոզիչների մոտ: Քրդերը կարողացան հայտնաբերել վերջիններիս և սպանել»:[23] Պատմելով մահմեդականների կատարած վայրագությունների մասին Ռ. Լաբարեն շարունակում էր. «Բոլոր կանանց անխտիր բռնաբարեցին. դա ծրագրի կանխամտածված մասն էր կազմում»:[24]

Գուլփաշանից բացի, ջարդեր տեղի ունեցան նաև մյուս ասորական գյուղերում: Խոսրովա գյուղում, օրինակ, քրդերը մի տեղ հավաքելով ասորի բնակչությանը, այդ թվում նաև այն փախստականներին, որոնք այստեղ էին հասել շրջակա գյուղերից, մոտ 7 հազար մարդ, բոլորին կոտորեցին:[25] Այստեղ մի այգու մեջ հարյուրից ավելի կուտակված դիակներ էին հայտնաբերվել: Ականատեսներից մեկը վկայում էր. «Մի պատի տակ ես տեսա հինգ դիակ, որոնց միասին կապել էին, խողխողել և պատը փլեցրել նրանց վրա»:[26] 300 մարդ ողջակիզվեց Նազլի-Չայի ափին գտնվող Աղա գյուղի նեստորական եկեղեցում:[27] Նույնը կատարվեց Գյոգթափե գյուղում. վանքում ապաստանած 70 ասորիների հրկիզելուց հետո, գյուղի 60 պաշտպանների ձեռքերը կապեցին և գնդակահարեցին: 200 կանանց տարան թուրքական հարեմներ: Ականատեսի վկայությամբ, Գյոգթափեի գերեզմանները լցված էին դիակներով:[28] Մոտակայքում գտնվող Խանիշա գյուղում, ուր բնակվում էին 50 տուն հայեր ու ասորիներ, թուրքերը նորից ոչ մի քրիստոնյայի չխնայեցին:[29] Այս նույն ժամանակ քրդերը մտան Փաքավուր ասորական գյուղը, ավերեցին այն՝ սրի քաշելով տեղի բնակչությանը:[30]

1915թ. ապրիլի 20-ին ռուսների կողմից Դիլմանի գրավումից գազազած՝ թուրքերը սրի քաշեցին մոտակա 20 ասորական գյուղերի բնակիչներին[31]. 800 նեստորական ասորիներ կոտորվեցին հենց Դիլմանում՝ մինչև ռուսների գալը:[32] Այստեղ, մի քանի հարյուր ասորի կանանց մերկացնելով՝

հանեցին կենտրոնական փողոց: Նրանց տրվեց մեկ ժամ ժամանակ՝ որոշում կայացնելու՝ փոխում են իրենց կրոնը, թե՝ ոչ: Ականատես Ջոզեֆ Նայեմի վկայությամբ՝ Դիլմանի կենտրոնական փողոցով հոսում էր այդ սպանված կանանց արյունը:[33] Սառույցբուլաղում կատաղի մարտեր ծավալվեցին ասորիների և քրդերի միջև: Սպանդից փրկվելու միակ ելքը գաղթն էր. բազմաթիվ մարդիկ բռնեցին աքսորի ճանապարհը: Սկսվեց գաղթը դեպի Ջուլֆա: Ջուլֆայի ռուսական հյուպատոս Կիրսանովը մի խնդրագիր ուղարկեց իր երկրի կառավարությանը՝ 15 հազար ասորի գաղթականներին փրկելու հույսով:[34] Մի քանի օրվա ընթացքում գաղթականների թվաքանակը աճեց՝ Ջուլֆա հասան մոտ 44 հազար գաղթականներ, որոնցից 20 հազարը Թավրիզի, Խոյի, Սալմաստի և Ուրիմիայի ասորիներն էին»:[35]

1915թ. ապրիլի 26-ին «Նյու-Յորք թայմս»-ը տպագրեց «Քրիստոնյաների մեծ գաղթը» վերնագրով մի հոդված, ուր, մասնավորապես, ասվում էր. «20-30 հազարի չափ նեստորական ասորիներ և հայեր զանգվածաբար գաղթեցին Իրանական Ադրբեջանից: 1500-ից ավելի մարդ կոտորվեցին, 2 հազարի չափ՝ մահացան հիվանդություններից: 2 հազար ասորի կրկին գաղթեցին Կովկաս: Գաղթողների մեջ էր ազգությամբ ասորի Իսահակ Յոնանը, որը, պատմելով իրենց կրած տառապանքների, զոհերի և անտանելի դրության մասին, ավելացրեց, որ օրական քսան մղոն քայլելուց հետո վիճակն այնքան անտանելի էր, որ թվում էր, թե ոչոչերը նախանձում էին մեռածներին»:[36]

Հատկապես ծանր էր այն մարդկանց դրությունը, ովքեր չէին կարողացել, կամ չէին ցանկացել փախչել. 22 հազար ասորի պատսպարվել էին ամերիկյան և ֆրանսիական քարոզիչների շենքում: Ուրմիայի հիվանդանոցի տնօրեն Յա. Սարգիզի վկայությամբ, ռուսների հեռանալուց հետո հինգ ամսվա ընթացքում իրենց տարածաշրջանում մահացան 8500 ասորի, որոնցից 1500-ը սպանվեցին, իսկ մնացածները մահացան քաղցից և ցրտից:[37]

Քարոզիչ Ֆ. Ն. Ջեսսուփը 1915թ. մարտի 17-ի իր նամակում գրում էր. «Սովից և հիվանդություններից ամեն օր մահանում է 10-15 մարդ: Հետագայում նրանց թիվը հասավ 40-ի: Նեստորական ասորիների այս դժբախտությունները մեր առաքելության 30 տարվա պատմության ամենատխուր իրադարձություններն են: Ասորական Գյոգթափե, Կիուլբարջին և Չերակուշու գյուղերը կողոպտվեցին և ավերվեցին: Գաղթական ասորիների մեջ կային բազմաթիվ զոհեր. ողջ մնացածների մի մասը ծայր աղքատության մեջ է գտնվում Կովկասում, իսկ մյուս մասը՝ կիսաքաղց շարունակում է իր գոյությունը Ուրմիայում»:[38]

Ուրմիայի արևմտյան մասում էր գտնվում Զոմալան ասորական նշանավոր գյուղը, որի բնակչության մի մասը՝ մոտ 1200 մարդ, գաղթել էր Կովկաս: Գյուղում մնացել էին միայն ծերերը, որոնց իսպառ կոտորեցին: Նույն դառը ճակատագրին արժանացավ Զոմալանի հարևանությամբ գտնվող ասորական մեկ այլ գյուղ՝ Քեաֆսին. այդ գյուղից 1000 մարդ հասցրել էր գաղթել Երևանի նահանգ, մնացածները՝ թուրքական բարբարոսության զոհը դարձան: Գյուղում նրանց առաջարկեցին մահմեդականություն ընդունել և ազատվել մահից, սակայն ասորիները ընտրեցին մահը: Գյուղի ասորի երեխաներին «ողջ-ողջ վիճակում կտոր-կտոր էին անում, գցում թոնիրը և խորովում, այնուհետև ստիպում մայրերին ճաշակել այդ մսից»:[40]

Վերապրածներից Հ. Սչվորթենը ընդամենը հինգ տարեկան էր, երբ

Ուրմիայում և մոտակա գյուղերում 1915թ. գարնանը տեղի ունեցան այս ողբերգալի իրադարձությունները:[41] «Ես հիշում եմ, - պատմում է նա, - թե ինչպես էին տարիքով մեծերը խոսում այն մասին, որ և՛ ռուսները, և՛ թուրքերը ուզում են ասորիներին իրենց կողմը ներքաշել: Երբ իմ ազգի ներկայացուցիչները մերժեցին թուրքերի հետ համագործակցել, սկսվեց մի ահավոր ջարդ: Հազարավոր մարդիկ սպանվեցին: Շուրջ 5500 ասորի ստիպված եղան լքել Ուրմիան և գաղթել տարբեր երկրներ»:[42]

1915թ. ապրիլին Ուրմիայում 500 ասորիների, որոնց մեջ էին այդ տարածաշրջանի եպիսկոպոսը և հինգ այլ հոգևորական, թուրքերը քարշ տալով հասցրեցին ֆրանսիական առաքելության շենքի մոտ սպանեցին:[43]

1916թ. սեպտեմբերին Իրանում թուրքական և գերմանական հյուպատոսության ներկայացուցիչները հայտարարեցին, որ կկանխեն հայերի և ասորիների նկատմամբ հետագա բռնությունների փորձերը գրավված տարածքներում: Սակայն Դիլմանի մոտակայքում գտնվող Հարիվ, Խոսրովա և Մեխլեմ գյուղերում միայն 1917թ. փետրվարի 14-ի լույս 15-ի գիշերը 707 հայ և ասորի սպանվեցին:[43] Ուրմիայի Ֆաթ-Ալի-Խան-Կյոլի ֆրանսիական կաթոլիկ քարոզիչների բակում թուրքերը կախաղան բարձրացրին 40 ասորու:[44]

Օգտվելով «ընձեռնված հնարավորությունից»՝ 1917թ. փետրվարին Ուրմիայի թուրքական հյուպատոսն իբր «ժողովրդի անվտանգությունն ապահովելու նպատակով» զինվորներ ուղարկեց ասորական բնակավայրեր, որոնք ավերեցին և թալանեցին գյուղերը՝ թուրքական հարեմներ տանելով տեղի ասորուհիներին: Այդ օրերին քաղաքում լուրեր են տարածվում, թե պարսիկները քրիստոնյա բնակչության կոտորած են պատրաստում: Ելնելով այդ հանգամանքից՝ ասորիները ժողով են գումարում և որոշում նախահարձակ լինել: Որոշումը սակայն ուշացած էր. արդեն փետրվարի 22-ին մահմեդականների մի ամբոխ հարձակվում է ասորիների լեգենդար առաջնորդ Աղա Պետրոսի տան վրա՝ այստեղ գտնվող զենքն ու զինամթերքը առևանգելու նպատակով:

1917թ. դեկտեմբերին ռուսական բանակը հետ է քաշվում Իրանի տարածքից՝ ասորիներին թողնելով բավական քանակությամբ զենք և զինամթերք: Իրանական կառավարությունը, իմանալով այդ մասին, փորձում է առիթն օգտագործել ասորիների հետ հաշվեհարդար տեսնելու համար: Ասորիները շտապում են հավաստիացնել, որ իրենք Իրանի դեմ ոչինչ չունեն և իրենց նպատակն է մնալ այստեղ՝ մինչև Քրդստանում որևէ «հողակտորի» ձեռքբերումը: Իրանական կառավարությունն ասորիների զինաթափման հրաման է տալիս: Հրամանին չենթարկվելու համար, 1918թ. փետրվարի 19-ին Սալմաստում և Ուրմիայի մի քանի շրջաններում բազմաթիվ ասորիներ սպանվեցին: Գործին միջամտում է Մար-Շիմունը. զինաթափումը տեղի է ունենում, սակայն սպանությունների հետ կապված այս դիպվածը երկար ժամանակ չի ջնջվում ասորիների հիշողությունից:

1917թ. դեկտեմբերին Ուրմիայում ժողով է հրավիրվում Անտանտի ներկայացուցիչների և Աղա Պետրոսի մասնակցությամբ, որի ժամանակ ասորիներին խոստանում են զենք, զինամթերք և գումար՝ ասորական ինքնավարություն ստեղծելու նպատակով: Սակայն պետք է կրկին ընդգծել, որ Մար-Շիմունի ռուսական կողմնորոշումը դուր չէր գալիս անգլիացիներին, որոնք ջանում էին ասորիներին զրկել իրենց հեղինակավոր առաջնորդից: Անգլիացիների այդ վերաբերմունքը ասորիների նկատմամբ

լրիվ համընկնում էր քրդերի առաջնորդ Իսմայիլ աղա Սեմկոյի (որոշ աղբյուրներում նաև Սիմկո կամ Սմկո) շահերին: 1918թ. սկզբներին դրամական միջոցների խիստ կարիք ունենալով՝ աղա Սեմկոն որոշում է այն ձեռք բերել ասորական բնակավայրերը և, հատկապես, պատրիարքարանը թալանելու միջոցով: Իր ծրագիրն իրագործելու համար նա մի քանի անգամ պատվիրակություն է ուղարկում Սալմաստում գտնվող Մար-Շիմունի մոտ: Հոգևոր առաջնորդին բազմիցս խորհուրդներ են տալիս՝ չհամագործակցել քրդերի առաջնորդի հետ, սակայն անգլիացի կապիտան Գրեսիի առաջարկությամբ 1918թ. մարտին որոշվում է քրդերի հետ ընդհանուր հայտարարի գալ՝ համատեղ գործելու համար: Աղա Սեմկոն մարտի 3-ին իր Քյոհնա-Շահար (Հին քաղաք) ամրոց է հրավիրում 100-150 հոգանոց[46] ասորական պատվիրակությանը՝ Մար-Շիմունի գլխավորությամբ և նրանց գցում ծուղակը: Աղա Սեմկոյի ճոխ ընդունելության ավարտից հետո Մար-Շիմունն ու նրա եղբայր Դավիթը 75 հոգու հետ սպանվում են»:[47]

Աղա Պետրոսը որոշում է վրեժխնդիր լինել և 7 հազար լեռնցիներով Ուրմիայից գալիս ու երեքօրյա կատաղի մարտերից հետո հիմնահատակ ավերում է աղա Սեմկոյի ամրոցը: Դրանից հետո նա պաշարում է աղա Սեմկոյի մեկ այլ՝ Չարա-Քալու (Դիլմանից դեպի հարավ) ամրոցը: 36-ժամյա կատաղի մարտից հետո ամրոցն ընկնում է ասորիների ձեռքը: Քրդերի առաջնորդին հաջողվում է 28 հոգու հետ փախչել և իր վրեժը լուծել Խոյում ապրող 3800 ասորի և հայ կանանցից ու երեխաներից: Տեղացիներից շատերը ստիպված ընդունում են մահմեդականություն:

Մար-Շիմունի մահից հետո մի քանի ամսվա ընթացքում Ուրմիայում կոտորվեցին ևս 9 հազար ասորի:[48] Նրանց թվում էին հայտնի բժիշկներ, ուսուցիչներ, գիտնականներ և հոգևորականներ:

Մար-Շիմուն Բենիամինի մահը, որ ծանր հարված էր ժողովուրդի համար, չընկճեց ասորիներին: Նշանակվեց նոր ղեկավարի ընտրության օր, և 1918թ. մարտի 8-ին Սբ. Մարիամ նեստորական եկեղեցում միտրոպոլիտներ Մար-Իլիայի և Մար-Խնանիշոյ ներկայությամբ ժողովուրդը միաձայն պահանջեց ավանդության համաձայն պատրիարք ընտրել մահացած Մար-Շիմունի ավագ եղբայր Փոլուսին: 1918թ. ապրիլի 15-ին Փոլուսն ընտրվեց պատրիարք՝ որպես Մար-Շիմուն 20-րդ:[49]

Պայքարը թուրքական, իրանական և քրդական ուժերի դեմ նոր թափ է ստանում: 1918թ. ապրիլի 16-ին Դիլմանում Աղա Պետրոսի և թուրքական զորամիավորումների միջև տեղի է ունենում ճակատամարտ: 1918թ. հունիսի 18-ից սկսված քրդերի և թուրքերի կողմից Ուրմիայի պաշարումը տևում է երկու ամիս: Անտանտի խոստացած օգնությունը պաշարյալներին չի հասնում: 100 հազար մարդուց փրկվում է միայն 80 հազարը:[50] Սկսվում է տանջալից փախուստ Ուրմիայից դեպի Միջագետքի անապատները, որն ուղեկցվում է մարդկային ծանր կորուստներով: Անգլիացի կապիտան Ջ. Մակկարդին այս կապակցությամբ նշել է. «Մենք պարտավոր էինք մեր խոստումները կատարել ասորի ժողովրդի հանդեպ, որը մեր կողքին էր, երբ մենք օգնության խիստ կարիք ունեինք: Անգլիայի նկատմամբ իր ազնվության համար այսօր այդ ժողովուրդը շատ թանկ է վճարում: Ես երբեք չեմ մոռանա այն, ինչ տեսան նրանք աքսորի այդ ճանապարհին»:[51] Անգամ ազգությամբ անգլիացի Ռ. Ստաֆֆորդը[52], որն առիթը բաց չէր թողնում արդարացնելու անգլիացիների գործողությունները, ստիպված էր ընդունել, որ «ասորիների այս խաչակրաց ճամփան զինվո-

ական պատմության ամենառողբերգական էջերից է: Միայն այս ժամանակահատվածում նրանք կորցրին իրենց ազգի մեկ երրորդը: Ավելի քան 17 հազար ասորի մահացան այս գաղթի ճանապարհին»:[53]

Ողջ մնացածներն ուժասպառ հասան Բաղդադ և Բա'կուբա քաղաքները: Բաղդադ էին հասել 50-60 հազար հայ և ասորի:[54] Միջագետք տանող այդ անապատների ճանապարհին ասորիներից վերցնում էին բոլոր արժեքավոր իրերը, որի դիմաց տալիս էին անդորրագիր՝ խոստանալով, թե իբր կվերադարձնեն Մոսուլ հասնելուն պես: 50 հազարի չափ ասորիներ մահացան ծարավից և քաղցից: Այդ օրերը վերապրած հայ տարագիր Հ. Միութեեյանը, որը փրկվել էր ասորիների շնորհիվ[55], պատմում էր. «Քանի օր էր ջուր չէինք խմել: Հազիվ հասանք մի հորի մոտ, որի շուրջը երևացին դիակներ և արյուն: Մոտենալով հորին, տեսանք, որ հորի մեջ էլ դիակներ կան, որոնց պատճառով հորի ջուրը բավականին վեր էր բարձրացած: Ինչպես հետագայում իմացանք, այդ դիակները կպատկանեին ասորու տարագիրներուն, որոնք մորթված և հորը նետված էին քանի մը օր առաջ՝ կողոպտելուն ետք»:[56]

Առանձին հետազոտողների հաշվումներով, այս ամբողջ ժամանակաշրջանում միայն Ուրմիայից, Սալմաստից և Օսմանյան կայսրության զանազան շրջաններից Կովկաս գաղթեցին 20 հազար ասորի, իսկ 30 հազարի հասնող զանգված էլ հասավ Արմավիր, Ռոստով, Կրասնոդար, Վլադիկավկազ և Նովոռոսիյսկ քաղաքները:[57]

1918թ. ամռանը Իրանում ասորիների վիճակը դարձավ անտանելի. շոգի, սովի ու համաճարակների հետևանքով ասորի գաղթականների թիվը շեշտակիորեն նվազեց: Բացի այդ, ողջ ամռան ընթացքում քրդերը հանգիստ չէին տալիս ասորի գաղթականներին Խոյում: Այս ժամանակահատվածում այստեղ զոհվեցին 270 ասորի:[58]

Ողջ մնացած գաղթականները՝ շուրջ 100 հազար մարդ, հասան Համադան[59], որտեղ նրանց սպասում էր անգլիացիների անհյուրընկալ վերաբերմունքը: 5-րդ հայկական հրաձգային գնդի զինվորական Տ. Ժամհարյանցն իր զեկուցագրում այդ կապակցությամբ գրել է. «Մենք ամեն ինչ արեցինք, որպեսզի փրկենք սպանդից զերծ մնացած մարդկանց՝ հասցնելով նրանց անգլիացիների մոտ (Համադան - *Ա. Խ.*), սակայն այստեղ նրանք նույնպես դատապարտված են մահվան»[60]:

Համադանում ասորիներին սկսեցին ներգրավել անգլիական բանակի մեջ՝ «ասորական լեվիսներ» անվան տակ: Վերջիններս 1919թ. Միջագետքում մասնակցեցին արաբների և քրդերի հակաանգլիական խռովությունների ճնշմանը:

Այսպիսով կարելի է փաստել, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան Թուրքիայում և նրան հարակից տարածքներում, ուր ապրում էին մոտ մեկ միլիոն ասորի, միջազգային իրավունքի չափանիշներով կատարվեց ցեղասպանություն: Երիտթուրքերը մեծ տերությունների հանցավոր թողտվության պայմաններում, օգտվելով պատերազմական իրադրության ընձեռած հնարավորությունից՝ մարդկության դեմ կատարեցին ծանրագույն հանցագործություն՝ քրիստոնյաների ջարդեր ու կոտորածներ կազմակերպելով ոչ միայն Թուրքիայի, այլև հարևան Իրանի տարածքում: 1914-1918թթ. աշխարհամարտի տարիներին բնաջնջման ենթարկված ասորիների թիվը հասնում է 250-270 հազարի:[61] Ասորիների ջարդերը շարունակվեցին նաև Առաջին համաշխարհային պատերազմին

հաջորդող տարիներին: Ասորիները կորցրեցին իրենց ազգի մոտ 2/3-ը:

Դեռ 1916թ. նոյեմբերին «Նյու-Յորք թայմս»-ը տպագրեց բժիշկ Վ. Ռոքվելի «Հայերի և ասորիների զոհերի թիվը» վերնագրով մի հուլված, որտեղ հեղինակը, պատմելով երիտթուրքերի կազմակերպած հայկական կոտորածների մասին, ավելացնում է. «Միայն հայերը չեն, որ անբախտ են. ասորիներին նույնպես ոչնչացրեցին և յուրաքանչյուր տասերորդին հնձեցին: Այդ ազգի ներկայացուցիչներից շատերը կործանվեցին, սակայն ոչ ոք չգիտի, թե որքան...»:[62]

Ամերիկյան մեկ այլ պարբերական՝ «Atlantic Monthly» թերթը, գրում էր. «Վեց ամսվա ընթացքում երիտթուրքերը արեցին այնքան բան, որքան չկարողացան անել հին թուրքերը վեց դարերի ընթացքում: Հազարավոր ասորիներ անհետացան աշխարհի երեսից»:[63]

Այսօր աշխարհով մեկ սփռված ասորի ժողովուրդը մարդու իրավունքների հարգման, ինքնավար պետություն ունենալու կարիք է զգում և շարունակում է իր դարավոր ու արդար պայքարը: Ինչպես հայերը, այնպես էլ ասորիները պահանջում են, որ Թուրքիան դատապարտվի միջազգային ատյանների կողմից, որ ցեղասպանության հետևանքով տարածքների և նյութական արժեքների կորուստները հատուցվեն միջազգային նորմերի սահմաններում՝ մոռացության չմատնելով, որ ցեղասպանության մահացու վարակը մարդկության ապագան կանգնեցնում է վտանգի առաջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, Bethnahrin yurtsever devrimci örgütü Asuri-Suryani halkina yonelik 1915, Soykirimi ve katliamlari arastirma komisyonu, Frankfurt, 1998, s .6.

[2] Արզումանյան Մ. Հայաստան 1914-1917. Ե.. 1969, էջ 488:

[3] Центральный государственный военно-исторический архив (далее ЦГВИА), колл. микрофильмов 9 (поступл. 29), ф. 2000, оп.1, д. 265, л. 2.

[4] Лазарев М. С. Курдский вопрос (1891-1917), М., 1972, с. 296.

[5] Саргизов Л. М. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока, Е., 1979, с. 36.

[6] Hubbard G. E. From the Gulf to Ararat, An Expedition through Mesopotamia and Kurdistan, London, 1916, pp. 257-258.

[7] Саргизов Л. М., указ. соч., с. 26.

[8] Վրաստանի պետական կենտրոնական պատմության արխիվ (այսուհետ՝ ՎՊԿՊԱ), ֆ. 13, g. 27, գք. 2, գ. 3361, թ. 103:

[9] Саргизов Л. М., указ. соч., с. 25.

[10] Ա-Դ.ο. Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թականներին, Ե., 1917, էջ 114:

[11] Johannan A. The death of Nation, New–York – London, 1916, p. 120:

[12] Саргизов Л. М., указ. соч., с. 46.

[13] Kloian R. D. The Armenian Genocide, News Accounts from the American Press (1915-1922), California, 1985, p.139.

[14] Матвеев К. П., (Бар-Маттай), Мар-Юханна И. И. Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968, с. 49.

[15] Саргизов Л. М. Дружба идущая из глубины веков (Ассирийцы в Армении), "Атра", N 4, СПб, 1992, с. 72.

[16] Johannan A., op. cit., p.127, 128, 134.

[17] «Մշակ», № 223, 10 հոկտեմբերի, 1915:

[18] Kloian R. D., op. cit., p.11.

[19] Матвеев К. П. (Бар-Маттай), Мар-Юханна И.И., указ. соч., с. 49.
[20] «Մշակ», № 55, 14 մարտի 1915:
[21] «Մշակ», № 41, 25 փետրվարի 1915:
[22] Kloian R. D., op. cit., p. 40.
[23] Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, s. 32.
[24] Kloian R. D., op. cit., p. 17.
[25] Naayem J. Shall this nation die, New-York, 1921, p. 271.
[26] Ա.-Դ.ο, նշվ. աշխ., էջ 121:
[27] Naayem J., op. cit., p. 272.
[28] «Մշակ», № 62, 27 մարտի, 1915:
[29] «Մշակ», № 41, 25 փետրվարի, 1915:
[30] Naayem J., op. cit., p. 272.
[31] Саргизов Л. М. Дружба идущая из глубины веков (Ассирийцы в Армении), с. 72.
[32] Alichoran J. Du génocide à la diaspora: les Assyro-chaldéens au XX siècle, Paris, 1994, p. 369.
[33] Naayem J., op. cit., p 288.
[34] ՎՊԿՊԱ, ֆ. 519, ց. 1, գ. 21, թ. 289:
[35] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 127, թ. 109:
[36] Kloian R. D., op. cit., p. 9.
[37] Նույն տեղում, էջ 139:
[39] Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, s. 35-36.
[40] «Մշակ», № 59, 19 մարտի, 1915:
[41] Հելեն Սշվորթենն այժմ ԱՄՆ-ի ասորիների միության նախագահն է: 1998թ. նա հրատարակեց իր կյանքի պատմության մասին մի գիրք, որտեղ անդրադարձավ նաև 1915թ. ասորիների կոտորածներին Ուրմիայում: Schwarten H. My story: Persia to Iran, Chicago, 1998.
[42] Shoumanov V. Assyrians in Chicago, Great Britain, 2001, p. 64.
[43] Naayem J., op. cit., p. 272.
[43] Геноцид армян в Османской империи, Сбр. документов и материалов под ред. проф. Нерсисяна М. Г., Е., 1966 с. 246.
[44] Լեփսիուս Յ. Գաղտնի տեղեկագիր, Հայաստանի ջարդեր, Կ. Պոլիս, 1919, էջ 115:
[46] Саргизов Л. М.., указ. соч., с. 100.
[47] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 96, թ. 5:
[48] Naayem J., op. cit., p. 287.
[49] Gilliana Sh. Z. Assyrians in the wilderness, Chicago, 2000, p. 53. Այս պատրիարքը, սակայն, հիվանդ էր, ուստի նրա դերը փաստացի իր վրա էր վերցրել քույրը՝ Սուրմա խանումը, որի կույր հավատը անգլիացիների նկատմամբ ծանր անդրադարձավ ասորիների հետագա ճակատագրի վրա: Մար-Շիմուն 20-րդի վաղաժամ մահից հետո օրինական ձևով այդ պաշտոնը պետք է ստանձներ 12-ամյա Իշայան, որը հետագայում դարձավ Մար-Շիմուն 21-րդ, սակայն այդ ժամանակ՝ 1924թ., նա ընտանիքով մեկնեց Անգլիա: Հոգևոր գործերը շարունակում էր տնօրինել Սուրմա խանումը:
[50] Alichoran J., op. cit., p. 382.
[51] Նույն տեղում:
[52] Իրաքի արտաքին գործերի նախարարության նախկին վարչական տեսուչ:
[53] Stafford R. S. The tragedy of the Assyrians, London, 1935, p. 33-34.
[54] Վարդանեան Ե. Անապատէ անապատ, Վենետիկ, 1923, էջ 53:
[55] Միութեեանց Հ. Հուշեր 1915-ի տարագրութենէն, Փարիզ, 1981, էջ 25-28:
[56] Նույն տեղում, էջ 11:
[57] Naayem J., op. cit., p. 292.
[58] Warda J. The Flickering Light of Asia, New York, 1916, p. 156-158.
[59] Народы мира, т. Народы Передней Азии, М., 1957, с. 295.

[60] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 2, գ. 96, թ. 20:
[61] Asuri-Suryani-Keldani halkinin 1915 soykirim (SEYFO) dosyasi, s. 7. Տես նաև Naayem J., op. cit., p. 30. Տես նաև Լևոն Վարդան. Ժամանակագրություն հայկական տասնիինգի 1915-1923, Պէյրութ, 1975, էջ 90:
[62] Kloian R. D., op. cit., p. 183-189.
[63] Նույն տեղում, էջ 193.

Резюме

Погромы ассирийцев во время Первой мировой войны на тюркоселенных территориях Ирана.

Анаит Хосроева

В течение Первой мировой войны резня и погромы ассирийцев происходили как на территории Османской Турции, так и, во время войны объявившей себя нейтральной страной, на терротории Ирана. В сентябрс 1914г. здесь были сожжены волее 30 армянских и ассирийских сел. Только в ассирийской деревне Каначар заживо выло сожжено 200 человек. 750 ассирийцев было казнено в ассирийской деревне Автеван. 5 тыс. ассирийских женщин оказалось в курдских гаремах. В январе 1915г. полицейский отряд под командованием хана Качала окружил ассирийское село Гюлпашан и разорил ее. После взятия Дилмана жители ближайших 20 ассирийских деревень были истреблены. До 1918г. турками выло уничтожено 98 ассирийских сел. Единственным выходом оставалась депортация. Начинается мучительный побег в Междуречье, который сопровождается тяжелыми человеческими потерями. По этому поводу некий английский очевидец свидетельствовал, - "Мое внимание привлекла картина трагической депортации одного отверженного народа. Я говорю об ассирийцах".

В течение 1914-1918гг. в Турции и примыкающих к ней территориях, где проживало около одного миллиона ассирийцев, по меркам международного права имел место настоящий геноцид.

Summary

The Assyrian massacres in the Turkish territories of Iran in WWI.

Anahit Khosroyeva

During WWI Assyrians as well as Armenians underwent massacres and deportation. Unfortunately, the massacres were carried out by considering itself neutral country Iran. Only in September 1914 over 30 Assyrian and Armenian villages were burnt. In Assyrian village Kanachar 200 of people were burnt alive. 750 Assyrians were beheaded an village Havtvan. 5,000 Assyrian women were forced into Kurdish harems. After seizure of Dilman the people of the nearest 20 Assyrian villages were exterminated. Before 1918 Assyrian 98 villages were destroyed by Turks. Thousands of Assyrians were raped, tortured and murdered. The only way out it was the deportation. The poignant escape began from Iran to Mesopotamia, which was accompanied by hard human losses. "The picture of tragic deportation of small rejected people was drawn my attention. I speak about Assyrians", - an English eye-witness testified.

So, during 1914-1918 in Ottoman Turkey and adjoined countries where about 1,000 000Assyrins lived according to measures of international law the real genocide took place.